ML MINING

ՄԼ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ
21/3 Ն.Ադոնց փող, Երևան, ՀՀ

ML MINING LLC
21/3 N.Adonts str, Yerevan, RA

09 փետրվար 2026թ. N 47

ՀՀ շրջակա միջավայրի նախարար

պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգելի պարոն նախարար

Մեր ընկերությունը Քարաջրի կոպճային ավազի հանքավայրի տարածքում իրականացնում է օգտակար հանածոյի արդյունահանում համաձայն 22.11.2012թ.-ի N29/250 ընդերքօգտագործման թույլտվության:

Հանքավայրի շահագործման բնապահպանական կառավարման վերանայված պլանին համաձայն աշխատանքների ընթացքում կատարվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ,
2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ,
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ դրանց պահպանման համար նախատեսված տեղից դեպի հավաքող փոսը ուղղությամբ,
4. հանքավայրի հարակից շրջանի կենսաբազմազանության մշտադիտարկումներ, տարեկան մեկ անգամ հաճախականությամբ,
5. ջրհեռացման առվի ելքային հատվածում պարզեցված ջրերի պղտորության մշտադիտարկում, շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ,
6. տոպոհանութային աշխատանքների կատարման միջոցով գետի հունի վիճակի և կայունության մշտադիտարկումներ:

Ստորև ներկայացնում եմ 2025 թվականի ընթացքում Քարաջրի ավազի հանքավայրի տարածքում ընկերության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ ըստ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման հավելված 2-ով սահմանված ձևաչափի:

«ՄԼ Մայնինգ» ՍՊԸ

գլխավոր տնօրեն՝ Է. Մարգարյան

(+374) 10 200 004 mlmining.am mlmining@mail.ru

## ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
## ԱՄՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| Մշտադիտարկումների օբյեկտը | Մշտադիտարկումների վայրը | Միջին ցուցանիշը | Մշտադիտար-կումների տեսակը | Հաճախականությունը | Արդյունքը[1] |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Մթնոլորտային օդ | Հանքավայրի տարածք | Անօրգանական փոշի ($SiO_2$ 20-70% ) | Նմուշարկում, նմուշների լաբորատոր վերլուծություն | Աշխատանքների ընթացքում, յուրաքանչյուր շաբաթ | 0.018մգ/մ³ |
| Մակերևութային ջրեր | Ջրհեռացման առու | Կախութային մասնիկներ | Նմուշարկում, նմուշների լաբորատոր վերլուծություն | Աշխատանքների ընթացքում, յուրաքանչյուր շաբաթ | 12մգ/լ |
| Ստորգետնյա ջրեր | Նախատեսված չէ | | | | |
| Հողային ծածկույթ | Արտադրական հրապարակի տարածք | Նավթամթերք-ներ | Դիտարկում, նմուշարկում | 2025 թվականի ընթացքում մեկ անգամ | Նավթամթերքների արտահոսքեր չեն հայտնաբերվել |
| Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ | Հանքավայրի տարածք | ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ | Դիտարկում դաշտային պայմաններում | 2025թվականի ընթացքում մեկ անգամ | ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել |

[1] Հավատարմագրված լաբորատորիայի կողմից փոշու մոնիթորինգի իրականացման խնդիրների հետ կապված, մոնիթորինգի արդյունքը նշվում է ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից ֆոնային կոնցենտրացիաների վերաբերյալ ժամանակավոր առաջարկությունների /https://meteomonitoring.am/web/render/text/sub_breadcrumb_id/20/air/concentration/

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| Աղմուկ և թրթռում | Նախատեսված չէ | | | | |
| Ոչ վտանգավոր թափոններ | Նախատեսված չէ | | | | |
| Վառելանյութերի պահեստարաններ | Հանքավայրի տարածքում վառելանյութերի պահեստարաններ չկան | | | | |
| Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապ-ված ենթակառուց-վածքներ | Հանքավայրի տարածքում ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ չկան | | | | |
| Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակ | Բոլոր սարքավորումներն անցել են տարեկան տեխնիկական ստուգում | | | | |